Առանց մրցույթի դրամաշնորհ հատկացնելու և ՀՀ կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N 1515-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

ՈՐՈՇՈՒՄ

___ _____ 2019 թվական N ___

ԱՌԱՆՑ ՄՐՑՈՒՅԹԻ ԴՐԱՄԱՇՆՈՐՀ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N1515-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին>> ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 17 կետով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1.2019 թվականի պետական բյուջեով տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի խթանման ծառայությունների ծրագրով «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամին առանց մրցույթի որպես դրամաշնորհ հատկացնել 76,460,0 հազար դրամ, իսկ «Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միությանը»՝ 15,000.0 հազար դրամ:

2. 2019 թվականի պետական բյուջեով տեխնոլոգիական կենտրոնների գործունեության իրականացման ծրագրով 149,595,4 հազար դրամը՝ առանց մրցույթի որպես դրամաշնորհ հատկացնել «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամին:
3. 2019 թվականի պետական բյուջեով տեղեկատվական տեխնոլոգիաների համաշխարհային համաժողովի կազմակերպման ծրագրով 1,259,693.0 հազար դրամը՝ առանց մրցույթի որպես դրամաշնորհ հատկացնել «Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միությանը»:
4. ՀՀ կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N 1515-Ն որոշման 17-րդ կետի 2) ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի և «Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության» հետ կնքվող դրամաշնորհների հատկացման պայմանագրերով սահմանել և ապահովել, որ վերջիններիս կողմից իրականացվող ծրագրերն ավարտվեն մինչև 2019 թվականի դեկտեմբերի 25-ը, իսկ ծրագրերի իրականացման և պահպանման շրջանակում կնքվող գնման պայմանագրերով նախատեսվեն ապրանքների, աշխատանքների և ծառայությունների այնպիսի քանակ, որն անհրաժեշտ է օգտագործել մինչև սույն ենթակետում նշված ժամկետի լրանալը:

5. ՀՀ կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N 1515-Ն որոշման N5 հավելվածի N8 աղյուսակում <> ծրագրի՝

1) <> միջոցառման առաջին տողից հանել <<առաջին եռամսյակ>> բառերը, իսկ <<4,600.0>> թիվը փոխարինել <<76,460.0>> թվով, երկրորդ տողից հանել <<երկրորդ, երրորդ և չորրորդ եռամսյակներ>> <<Մրցույթով ընտրված կազմակերպություն>> բառերը, <<Մրցույթով ընտրված կազմակերպություն>> բառերը փոխարինել <<Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն>> բառերով, իսկ <<86,860>> թիվը փոխարինել <<15,000.0>> թվով:

2) <> միջոցառման 1-ին տողից հանել <<առաջին եռամսյակ>> բառերը, <<15,000.0>> թիվը փոխարինել <<149,595.4>> թվով, իսկ 2-րդ տողը հանել ամբողջությամբ:

3) <> միջոցառման 1-ին տողում <<Մրցույթով ընտրված կազմակերպություն>> բառերը փոխարինել <<Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն>> բառերով, իսկ 2-րդ տողը հանել ամբողջությամբ: